

ՍՈՓԵՐՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ
ԺԸ
ԵՂԻՇԷԻ ՔԱՀԱՆԱՅԻ
ՃԱՌ
ՅԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Ի ԿԵՆՏՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
ՌՅԳ-1854

ՀՈԳԵԿՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

ՏԻՐՈՋ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԵՂԻՇԵ ՔԱՀԱՆԱՅԻ
ՃԱՌԸ

Աշխարհաբարի վերածեց՝ Պետրոս Բեդիրյանը

ՏԻՐՈՋ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԵՂԻՇԵ ՔԱՀԱՆԱՅԻ
ՃԱՌԸ

Սրբասեր Տեր Եղիշե քահանայի՝ ճգնավոր կրոնավորի ու մենակյացի՝ Թաբոր լեռան վրա Տիրոջ հայտնության մասին, Պետրոսյանց, Մեծ Վարդավառի օրվա առթիվ

Մինչ նրանք ճանապարհ էին գնում, մեր Տերն իր տասներկու [աշակերտներին] ասաց. «Մարդիկ իմ մասին ի՞նչ են ասում, ո՞վ կամ ո՞րտեղից են»: Դրսինների մասին նրան հայտնեցին, որ տարբեր կարծիքների էին: «Իսկ դու՞ք իմ մասին ինչ եք ասում»: Պետրոսն առաջ եկավ ու ասաց. «Դու ես Հիսուս Քրիստոսը, Աստծու Որդին»: Մեր Տերը նրա գեղեցիկ վկայությունը գովեց և հայտնություն պարգևեց շնորհն իր Հորը վերապահեց (Մատթ. ԺԶ 13-17, Մարկ. Ը 27-30, Ղուկ. Թ 18-20):

Ու քանի որ Պետրոսը դեռևս այս ու այն կողմ էր դեգերում, կարծում էր, թե Քրիստոս չի մեռնելու՝ լավ չհասկանալով, որ նրա մահով է մահը մեռնելու, աշխարհը՝ կենդանանալու: Մեր Տերն էլ տեսավ, որ Սիմոնը երկնային երանությունները մոռացել է, մորմոքալից խոսքեր հնչեցրեց նրա լսելիքին: [Սա] ահռելի վախից ամբողջովին սարսռեց, եք Տիրոջից լսեց. «Մարդու որդին պետք է շատ չարչարանքներ հանձն առնի, մեռնի ու երրորդ օրը հարություն առնի» (Մատթ. ԺԶ 21, Մարկ. Ը 31, Ղուկ. Թ 22): Մահվան հիշատակությամբ հույժ տոմեցրեց, իսկ հարության ավետիսով առավել մեծ չափով մխիթարեց:

Իսկ նա, մահվան հիշատակության մեծ տագնապից, հարության ավետիսը մոռացավ: Այդպես էլ մեր էության մեջ ենք տեսնում, որ կա. մեր մեղքերի բնության հին ախտերը թույլ չեն տալիս, որ մեր նոր կյանքը շուտով ներս գա: Ճիշտ այդպես ժողովրդի որդիներն էլ իրենց հին կուրությամբ նախանձում էին մեր այս նոր կյանքի երևանը՝ նրան Եղիա կամ Երեմիա կամ առաջին մարգարեներից մեկը ուրիշի անունով կոչելով, իբրև իրենց մահկանացու անձանց վատ մխիթարություն:

Մահկանացու ենք կարծում՝ ժողովրդի մտքի մեջ տարակուսանք մտցնելով նրա՝ մասին, ով եկել էր մարգարեների խոսքերն իրականացնելու: Պետրոսն էլ էր նույն ախտով տառապում, բայց իր գեղեցիկ վկայությունը մատուցեց, մտայնությունները չարչար հիվանդացրեց, անզգալի կերպով ուժգնորեն ընդդեմ գնաց, «Աստված չանի, թող այդ բանը չլինի», - ասաց: Բոլոր հին տարակույսները դուրս թափեց, նախկին գեղեցիկ վկայությունը փարատեց: Հայրը նրան Որդու ողջ աստվածությունը հայտնեց, որեսզի իր աստվածությամբ մարդեղությամբ չարչարանքներն ընդունի: Ով չարչարվի, նա էլ հարություն կառնի:

Այս ավետիսից բոլորը պարտավոր էին ուրանալ և ոչ թե երկու [էութունից] նրան զրկել բաղձալ: Տեսա՞ր. որտեղ որ աստվածայնության մասին խոսեց՝ նրան երանի տվեց, իսկ որտեղ որ հին մարդու պես խորհեց՝ նրան հայտնապես ասաց. «Դե՛ն գնա, Սատանա՛, քանի որ Աստծու բաները չես խորհում, այլ մարդկանցը» (Մատթ. Դ 10, ԺՁ 23, Մարկ. Ը 33):

Մարդու խորհուրդները ծխի պես անպետք են. այն ժամանակ երև այդ ծուխը սաստեց ու յաս նոր մարդուց անհետ կորցրեց, որպեսզի լույսն ինքնաձագ չլինի, առանց ապականելի խորհրդի: Հենց պալատականներն էլ պիտի մատնանշեին, թե ի՛նչն է սաստել: Առավ ու իր ետևը զցեց, որպեսզի իր Հոր իսկ կամքն անվրեպ կատարի: Նրանցից յուրաքանչյուրին էլ սովորեցրեց չարչարանքներն անձամբ ընդունել-տանել: Այնտեղ հարության հույսով նրանց զորացրեց, ոչ միայն նրանով, ինչ հետո էր լինելու, այլև որպեսզի միևնույն ժամանակ իր երկրորդ գալստյան օրինակը փոքրիշատե ցույց տա, ինչպես որ անսուտ վկայությամբ ասել է. «Արդարև ասում եմ ձեզ. մարդիկ կլինեն (այժմ այստեղ էլ կան), որոնք մահը չեն ճաշակի, մինչև որ Աստծու արքայությունը տեսնեն, որ իր զորությամբ եկած ասած կլինեն»:

Եվ այս տեղում՝ ավետարանագիրների խոսքերը ոմանց մի փոքր ակասական են թվում: Մատթեոսը վեց օրից հետո է ասում, իսկ Ղուկասն ու Մարկոսը՝ ութ օրից: Բայց մենք ուրիշների ասածներն ենք բավարար համարում. Մատթեոսը, ասում են [սրանք], մեկ և մյուս կողմերը թողել, միայն մեջտեղի ժամանակն է աշվել, իսկ մյուս երկուսը՝ թե՛ խոստանալը, թե՛ երևալը, մեջտեղի ժամանակով հանդերձ: Բոլորին էլ հաճո է թվացել սա ընդունելը. մենք էլ ենք միաբանվելով նրանց հետ համաձայնվում, ինչպես որ Մարկոս ավետարանագիրն է ցույց տալիս. «Այնպես եղավ, որ այս խոսքերից հետո երբ ութ օր անցավ, մեր Տերը, Պետրոսին, Հակոբոսին ու Հովհաննեսին հետը վերցնելով, առանձին մի բարձր լեռ ելավ, նրանց առաջ պայծառակերպվեց (Մարկ. Թ 1-3, Ղուկ. Թ 28-29): Նրա զգեստները փայլուն ու սաստիկ սպիտակ դարձան, այնքան, որ ոչ մի լվացարար չէր կարողանա այդպես սպիտակացնել: Եվ Մովսեսն ու Եղիան նրանց երևացին, որոնք կանգնած էին ու Հիսուսի հետ էին խոսում, պատմում նրա վախճանի մասին, որ Երուսաղեմում էր տեղի ունենալու» (Ղուկ. Թ 31):

Այստեղ այս սուրբ ավետարանագիրը երկրորդեց երկնավոր հայտնությունը:

Աստվածաշունչ Մատյանի բոլոր խոսքերում հույժ զարմանալի է հողեղեն այս բնությունը: Իսկ այդպիսի երկնավոր երևման ժամանակ ոչ միայն մենք ենք տկարանում, այլև երկնքի անմարմին զորությունները: Ամեն

ժամանակ, երբ մեր Տերն աշխարհի վրա շրջել է, ըստ այս մարդկային խոնարհության է անցկացրել, իսկ այդ լեռան վրա՝ զորությունն ըստ հրեշտակների: Ոչ միայն որովհետև ինքը լուսեղեն փառքով է երևացել, այլ նաև այն բանի համար, որ մահվան դռները ջարդել ու առաքյալներին իր խոստումներն է իրականացրել: «Աստուծուն է հատուկ,- ասում է,- այսպս լավ խորհելը, որպեսզի առանց մեզ ոչինչ չկատարվի»: Դավիթն էլ բարձրադասակ ասում է. «Արդարներն ինձ սպասում են մինչև որ հատուցես»: Եվ երկրորդ անգամ մեծերից մինչև փոքրերին [ազդարարում է]. «Վերջում ոչ ոք հատուցումը ընդունելի չի լինի»: Ինչպես որ մի շաբաթում է բոլոր արածաներին հաստատել, [այնպես էլ] մի օրում երկինքն ու երիրը կշաբաթանան, և ամեն մարդ ըստ իր վաստակի կստանա: Արդ Մովսեսին ու Եղիային էլ իր հետ վկայության համար էր տարել, որպեսզի Մովսեսի միջոցով մեռելների հարությունը նրանց ցույց տար, իսկ Եղիայի միջոցով՝ իր աստվածության սիրելի մահը: Դրան Եղիան քաջատեղյակ էր ու տենչում էր, թե ե՞րբ էր լինելու, որ տեսներ:

Այնտեղ ճշմարիտ արքայություն էր, քանի որ այնտեղ միասնական Երրորդությունն ամբողջական էր: Եվ Աստված [մեկ] տեղում չէ, բայց մարմնավորներին որպես տեղավոր է երևում: Ու այն տեղը, ու Աստված հայտնվել է, առանց վարանելու արքայություն է կոչվում, քանի որ արքայություն հենց այն է, ուր աստվածությունն է երևում:

Իսկ դու, ո՛վ իմ տեր Պետրոս, ինչու՞ ես այդ մահվանից զարհուրել, որից բոլոր բարիքներն են աշխարհին գեղվում: Նույնը հենց հիմա ուրիշներից էլ ես լսելու, որովհետև ավետարանագիրն ասում է. «Մովսեսն ու Եղիան նրա վախճանն էին պատմում, որ Երուսաղեմում էր տեղի ունենալու» (Ղուկ. Թ 31):

Արդ երբ Պետրոսը տեսավ, որ մեաժներն ու կենդանիները նույն բաներն են քարոզում, և Պերն ինքն իր կամքով է եկել Հոր միաբանությամբ,- նախկին երկյուղի մեջ առավել ևս թաղվեց, քանզի հաստատ իմացավ, որ մեր Տերը մահվանից չի սարսափելու, և անհնար է, որ մենք նրան թողնենք փախչենք: Նաև այն բանն էր քաջ գիտակցում, որ երբ Քրիստոս այս լեռից իջնի, ուղիղ Երուսաղեմ կգնա, ու մենք հենց մահվան կասկած կունենանք: Իր խղճահարության պատճառով սկսեց Տիրոջն ասել, որ հրամայի նրանցիժ յուրաքանչյուրի համար տաղավար սարքել. Մովսեսին ու Եղիային նորից չարձակի. թլինի թե մեկն իր մտքում անգամ ասի, որ այդ լեռան վրա մահվան իշխանություն չկա, և որ մահն այդ լեռը բարձրանալուց վախենում է: Հրեաներն իսկ չեն կարողանա հանդգնել այստեղ [ելնել]: Ապա եթե մենք էլ Երուսաղեմ գնանք, երբ Մովսեսն ու Եղիան մեզ հետ չլինեն, քահանաները չեն

կարողանա մեզ նեղը զցել, որովհետև սրանց սաստիկ ահին չափազանց տեղյակ են: Սա այն Մովսեսն է, որ անապատում նրանցից բազում բյուրերի է կոտորել. սրա հրամանով է, որ գետինը բացվել ու նրանց բնակները կուլ է տվել: Եղիայի մասին էլ անտեղյակ չեն. եթե սրա դեմ դույզն ինչ խոժոռեն, նա երկինքը կկապի ու նրանցից անձրևը կկտրի: Իսկ եթե էլ ավելի հանդգնեն, երկնքի (ց) հուր կիջեցնի ու ճշմարտության թշնմախներին կայրի: Շատ տեղերում սրա զորության ահը գիտեն, [գիտեն] ոչ միայն հիյալ քահանաները, այլև դրսում նրանց ուրացողները: Իրենց ութ հարյուր քրմերի սատակումը չեն մոռացել, որոնց ինքն իր ձեռքով Կիշոնի հեղեղատում կոտորեց: Եվ եթե Արքայաբ թագավորն էր նրանից երկնչում, որքա՞ն առավել՝ Աննան ու Կայափան, որոնք Արքայաբից ավելի տկար էին:

Նրանց այս բոլոր կասկածների պատճառով, որ մարդկայնորեն երկնչում էին, Հայրը, նրանց չափազանց ողորմելով, վերևից ասում է. «Ղա է իմ սիրելի Որդին, դրան լսեցեք» (Մարկ. Թ 6):

Երկրային ծաաներ էին պահապան լինում իրենց Տիրոջը, որովհետև երկուսն էլ երկյուղի ախտով էին բռնելվել: Երկնային տերությունն ինքը ոչ մեկի կողմից չի պահպանվում, այլ նա է, որ իր զորությամբ բոլորին էլ պահում է: Եվ դու տաղավարներ շինելու նեղություն մի՛ քաշեք. եթե շատ եք շոգել, ահա ձեզ ամպիովանի է տրվել, դրա տակ զովացեք (Մարկ. Թ 6, Ղուկ. Թ 34):

Երբ այս ծայնը երկնքից նրանց ականջին հասավ, նայեցին ու Հիսուսին մենակ տեսան: Ապա կարողացան գլխի ընկնել, որ իրենք այն ահից էին ընդարմացել ու չգտիեին՝ ինչ էին խոսում: Եվ եթե գիրքը նրանց «ապշած» է անվանում, [ապա] ինչպե՞ս է որ Մովսեսին ու Եղիային ճանաչեցին: Պարզ է, որ հիմարացածների համար էին նրանք աշածներ և ոչ ե իրենց լսածը հասկացածների համար: Ինչ որ աչքերով էին տեսել՝ ճշմարիտ էր, և ինչ որ ականջներով էին լսել՝ սուտ չէր: Բայց քանի որ ժամը սաստիկ ահավոր էր, մարդկային բնությունը չկարողացավ երկնավոր բնությունն ըմբռնել: Որովհետև այստեղ-այնտեղ սայթաքում էին. ու ոչ ոք չէր կարող [նրանց] մեղադրել: Քանի որ [անգամ] մեծն Աբրահամը վերին զորությունները բոլորովին իբրև մարդացածներ էր տեսնում, հոգիներին բախվելով՝ չէր կարողանում ճմարտաես ըմբռնել: Իր մտքերն այս ու այն կողմ էր տարուբերում. երեքին էր տեսնում ու մեկ կարծում, և երեքի ետ էր խոսում. մարդ էին երևում, իսկ նա Աստված էր կարծում: Եվ հողեղն բնությունն ոնեցողների մեջ ո՞վ է որ կարող է անբավ մեծությունն ըմբռնել ու այն ճանչել, [ճանաչել] ոչ միայն մարմնավոր մարդկանց, այլև երկնային պարզ էությունները: Գիրքը նրանց իրավամբ է «ապշած» անվանում: Նա, ում

գորությունից լեռները հավում են, անդունդները՝ ցամաքում, և մեր այս թանձրահող երկիրը հիմքից դղրդալով սասանում է,- իր ողորմությամբ խնայում է մեզ, որովհետև նրա ձեռքի գործն ենք, անխտիր բուլորս, այդ թվում նրան, որոնք լեռան վրա երկնչեցին:

Գիտենք, որ Աստվածաշունչ Մատյանը վայրիվերո չի խոսում, այլ ամեն բան ճշմարտաես է պատմում: Բայց խոսք կա, որ ինչես ասվում է, այնես էլ հասկացվում է: Սաայն անհրաժեշտ է խոսքի ծածուկ միտքը բացահայտել, որ հանունսեփական անձանց փրկության՝ հավատով է ընկալվում:

Պետրոսյանք, ասում են, Մովսեսին ու Եղիային ճանաչել են: Երբ ասում են՝ այո՛, ճանաչել են, ապա ինչպե՞ս են «ճանաչել» մի բան, որ չգիտեին: Խոսքի գորությունը քա՛ջ իմացիր՝ Պետրոս տիրոջ պես մոռացկոտ մի՛ լինի: Այդ ճառի սի՛գբը կարդա. տեղի մասին այն «աքայություն» է ասել. այնտեղ մարդկային մոռացություն չկա, այլ անմոռաց հիշողություն: Որովհետև մեզ նմանների համար այն տեղն է արքայություն, իսկ աստվածության համար՝ բովանդակ աշխարհը: Տերը մեզ ոչ թե բնական դպրություններն է սովորեցել, այլ իմացական գիտությունը: Մարդիկ իբր թե երկրից երկինք փոադրվեցին, դրա համար էլ թյուր մտքերն «ապշություն» անվանեցին: Իսկ անտեսանելին ճանաչելով՝ «արայության մանուկներ» կոչեց, նրանց իմացությամբ՝ «մարգարեության մանուկներ» [ընդունել] սովորեցրեց, որպեսզի այլևս կարիք չզգանք երկնավոր ժառանգության մեջ առաջինները, միջիններն ու վերջիններն անժանոթ համարելու: Երբ արքայության գավակներն արժանավոր մարդիկ լինեն, այնաստվածատուր շնորհից [նրանց] իմացություն կբաշխվի (ինչ որ մտքով ենք իմանում, «տեսանելի օրինակ» է անվանվում): Իսկ երբ մեզանից մարմնական (ֆիզիկական) քող վերանա, աստվածությունը դեմ հանդիման կտեսնենք, ինչպես որ հանարավոր է, հրեշտակների ամբողջ էությունը՝ [կտեսնենք], անժանոթներին՝ ինչես ինքներս մեզ, դրսից՝ արտաքին երեսը, իսկ մտովի՝ արտաքինն ու ներքինը: Եվ քանի որ Պետրոսյանք դեռևս մարմնավորներ էին, նրանց հոգիների մեջ իմացության շնորհի նշույլ կաթեցրեց. [դրանով] Մովսեսին ու Եղիային լիովին ճանաչեցին: Իսկ որ վայրիվերո խոսեցին՝ դա տեղում արտաքին զգացողությունից էր: Մյուս մասով՝ Աստված դարձյալ նրանց ողորմաց, որովհետև Մովսեսին ու Եղիային հավաստի ճանաչեցին, և որպեսզի նրանց մտքում մի բիծ էլ չմնար, այդ խոսքերից էլ ևս քաջաժանոթություն հաստատեցին: Նրանք Տիրոջ հետ այտնապես էին խոսում, իսկ սրանք նրանցից ամեն բան տեղը տեղին լսում էին: Սակայն ինչ որ լսել էին՝ չիմացան, որովետև եթե իրենք մոռացել էին, ավետարանագիրներն էլ չէին արձանագրել:

Բայց առջևում այս հարցը դեռ կա. Մովսեսն արդարև ի՞նչ էր Տիրոջ հետ խոսում, Եղիան էլ ի՞նչ էր նրա առաջ կրկնում:

Ավետարանիչը պատմում է նրա վախճանը, որ Երուսաղեմում էր տեղի ունենալու: Նրա վախճանը մահն է, ու հենց նրա մահվան շնորհիվ են երկնային բոլոր բարիքները եղել: Եվ [կասես]՝ Մովսեսն Աստծու Որդու մահվան մասին արդյոք որտե՞ղ է գրել: Ինձ այդպես մի՛ հարցնի, թե արդյոք որտե՞ղ է գրել. բոլոր մարգարեներն ու օրենքներն են Աստվածային Բանի մարդանալու մասին մեզ պատմել, [նրա] չարչարվելու, մեռնելու և հարություն առնելու մասին: Ծանոց [գրքում]. «Աստված ձեր եղբայրների միջից ձեզ մարգարե է մեջտեղ բերելու»: Նոր Կտակարանի օրենքներում. «Ով որ «ինձ» է ասում, նրան չլսեք»: Իր օրենքները լռեցել, Տիրոջ [օրենքներն] է հրամայել աաջ տանել (մկրտության, ծովի, ամպի, հրեղեն սյան, կողերի ոցման, վտակաբուխ վեմի [օրինակներում]): Եթե իմ ասածը չես ընդունում, առաքյալներինն անշուշտ կընդունես: «Վեմը,- ասում է,- որ ժողովրդի ետևից էր գնում, նա ինքն էր՝ Քրիստոսը՝ խաչելության փայտին, հրաշքներ գործող գավազանի մեջ, անարատի մահվան մեջ. Եգիպտոսում գառների արյան թափվելը, գերությունից նրանց՝ մահվան գորությաբ փրկության, նրա հարության ավետիսը,- այս ամենը Հովսեփի սուրբ ոսկորներն էին նրանց պատմում: Մեռածները կենդանիներին մահվանից փրկեցին: Նրա համբարնալու մասին մեծն Դավիթն է գրել նրանց ու բոլորին. «Աստված օրհնությամբ համբարծավ, մեր Տերը՝ փողի ձայնով»:

Այս բոլոր Եղիան էլ գիտեր, որովհետև մի հոգի էր, որ ամենքի մեջ էր խոսում. բոլորն էլ մեկ օրինակ գիտեին: Մարդ կար, որ մի քիչ խոսքերով էր սա ասում, և կար, որ ավելի շատ հանդիմանություն էր թափում: Սակայն գորության մղումով այս նույնը կրկնում էին: Մովսեսն ու Եղիան այս ամենը Տիրոջ հետ էին խոսում, որպեսզի առաքյալները նրանց անսուտ խոսքերի վկաները լինեին, եթե մահվան դատավճիռն իրենց վրա հասներ: Ու թող ոչ ոք նրա խոսքերին դեմ չկանգնի: Եվ ինչպես դրանից հետո հայտնի դարձավ, ոչ ոք Տիրոջ առջև այլևս չամարծակվեց նույն խոսքերը կրկնել:

Բայց դու երբ Մովսեսյանց կանգնելու և նրա հետ ոսելու մասին լսես, առանց ծանրութեթև անելու անտարբեր չլինես ու քիչ բան չիմանաս, դատարկ շաղակրատություն չհամարես: Լավ մտածիր ու պատվական այրերին նկատիր: Եթե ուշադիր լինես, [կհասկանաս, որ] այն տեղը երկնային բոլոր արքունիքներին գերազանցում է: Եվ կամ ու՞մ առաջ են կանգնած եղել: Կամ ովքեր որ կանգնած էին, եթե երկնային մեծություն չունենային՝ չէին կարողանա երկնային Տիրոջ առաջ կանգնել ու նար հետ խոսել: Բայց [նա] իր

սրտով նրանց բերեց, իր ողորմությամբ իրեն մոտեցրեց, իր ներումով ունկնդրեց նրանց, որի շնորհիվ էլ կարողացան իր հետ երկար խոսել: Ինձ թվում է, թե իրենց ազգատոհմին չափազանց շատ էին ողբում, թե քաղցր արմատի սիրույն՝ գավառների հանդե գութ ունեին: Ու թեև նրանցից աաջ բազում արդարներ են եղել, այդ ժամանակ բոլորին էլ չար էին տեսնում: Հաստատեցին, որ ժամանակը հասել է, օրը՝ մերձեցնել, երբ իրենց ակայծ ճրագը մարելու է, ջախջախված եղեզը արմատախիլ է արվելու (Մատթ. ԺԲ 20): Իրենց մտքում թաքուն իրենց ազգին էին ողբում: Տեսան, որ իրենց ամեն ինչն օտար է դառնալու, ու իրենք պետք է լոկ իբրև անշունչ մարմիններ մնան: Տեսան նաև Աստծու բարերարությունը, որ ոչ մեկի կորուստը չի կամենում: Համարձակվեցին Տիրոջը հարցնել (որ նրանց սրտի գաղտնիքները գիտեր). արդյոք հնար չի՞ լինի, ասացին, որ դու ուրիշ ձևով մեռնես, և ազգը կկորչի, հեթանոսներն էլ փրկվեն: Իսկ մեր Տերն իր ծառաներին չտրտմեցեց: այլ հարցման պատասխանն իր Հոր կամքին թողեց:

Գուցե ինձ ասեք. «Այդ որտեղ՞ից համարձակվեցիր չգրված բաները կրկնելու»: Ես եմ հենց Տիրոջը տեսել, որ լալիս էր Երուսաղեմում, սաստիկ ողբում էր իր ընտրյալ ազգին: Մեծ էր նույնպես, որ այսօր երեսնիվայր աղոթքի էր ընկել առ Աստված: Հասարակ մարդ չէր. իր ամբողջ գորությամբ [էր ողբում] ողջ գիշերների վերջում Մովսեսյանց հարցումն էր երկրորդում. «Հայր,- ասում էր,- եթե հնարավոր է, թող այս բաժակի ինձնից անցնի» (Մատթ. ԻԶ 39, Մարկ. ԺԴ 36): Եվ տեղնուտեղը իրերի խնդիրն իր Հոր կամքին էր հանձնում:

Դարձյալ աղոթքի կանգնեց ու նույն խոսքերը կրկնեց: Այս բանն է կարևոր, որ բոլորից աավել սովորենք, թե նա ինչպե՛ս չկամեցավ Հոր կամքից դուրս գալ. դու էլ նրա կամքից դուրս չգաս: Դրա համար է, որ Եղիանք էլ չկարողացան Տիրոջը մեղադրել, նույնես և Պետրոսյանք, որոնք ականատես էին եղել, ոչ միայն մեղադրյալները: այլև ամբողջ տիեզերքով մեկ [ցրված] երախտագետները: Սա է Տիրոջ առաջ մարդկանց խոսելը. ոչ միայն նրա հետ երկար խոսելը, այլև նրանից բոլորովին չհեռանալը, նաև հարկ եղած դեպքում նրա հետ մեռնելը: Եվ եթե Մովսեսը չէր կարողկրկնապատիկ մեռնել, [ապա] Եղիայի համար, եթե Տերը կամենար, հնարավորությունը կար:

Երբ նրանց առաջին հարցումը գլուխ չեկավ, երկրորդին սաստիկ տենչում էին: Սիրելի գորականներից այն ո՞վ պատերազմից հեռու կմնա, երբ ինքը թագավորը թշնամու վրա գնա: Եվ եթե երկրայինները դա անում են, որոնք ավելի հաղթվելու, քան թե հաղթելու տարակուսանքի մեջ են լինում,- քանի՞ քանիսը երկնավորին ոժարությամբ նահատկից կլինեն, մանավանդ, որ

առջևում մահվան կասկած չի լինում, այլ անմահ կյանքի հաղթանակ: Այս պատերազմից ոչ ոքի վայել չէ, որ սասափի, ո՛չ տղամարդկանց, ո՛չ կանանց, ո՛չ արդարներին, ո՛չ մեղավորներին, թե հնար լինի՝ գուցե նաև երկնավորներին: Բայց ահա, Եղիայի համար թեև անձկալի էր նրան խաչակից լինելը, Տերը նրան արգելեց, որպեսզի արդարներից ոչ ոք իր հետ չխաչվի: Որովհետև արդարների՝ համար խաչվելու չէր եկել, այլ բարու՝ համար, ինչպես որ հենց համարձակվեց մեռնել, որպեսզի իր մահով բոլորի մահը խափաներ: Եղիային մահից ետ պահեց, որպեսզի տրված պատիվն իրենից չզցի: Ոչ միայն Եղիային է իրեն մահակից լինել արգելում, այլև չի կամենում, որ արդարներից մեկն իր հետ մեռնի. սոսկ մեղավորներից, այն էլ ոչ թեիր խոսքով, այլ ում որ քահանայապետները կկամենան: Այնժամ թերևս նրա բարերարությունը երևա, որի մասին ավելի առաջ էլ ասված է, թե հանուն մեզ է «անօրենների» շարքը դասվել: Իր սիրուց է, որ Եղիային է խնայել, որպեսզի անմահության շնորհքով ապրի, իր երկրորդ գալուստը ծանուցող լինի:

Աստված գիտե՛, թե ի՞նչ է անում. ինքը մենակ է բերին կատարում: Քեզ համար այն էլ բավարար կլինի, եթե նրա հույսը վայելել իմանաս, ու երբ քեզ դուռը բաց անի, ապա թե կամենաս՝ դու էլ նրա պես կարողանաս գործել, ինչեպս որ առաքյալների հետ եղավ ու Քրիստոսի հետ է մինչև օրս լինում: Գիտեմ, որ շատ են իմ դեմ գայրացած: «Մեր Տերը,- ասում են,- անյտեղ՝ լեռան վրա, արքայությունն է ցույց տվել, իսկ դու եկել մահվան ճառ ես մեզ ասում: Ճառիդ լա՛վ նայիր ու կհամաձայնվես, որ նրանց լեռ բարձրանալը մահվան պատճառի սկիզբը եղավ: Եվ Մովսեսյանք եկան նույնը Տիրոջ առաջ երկրորդեցին»:

Մենք էլ նույն խոսքի մեջ արայությունը տեսանք: Զգեստի պայծառությունը սաստիկ սպիտակ էր և արեգակի ճառագայթներին գերազանցում էր. տեղին արժանի՝ զգեստին էլ վայելչություն էր պետք: Բայց նրանով էր արքայությունը կատարյալ, որ այնտեղ Հայրն ու Որդին են մարդկանց հայտնվում (Հայրն ու մարդու Որդին են հայտնվում): Սա պետք է հենց հաստատ իմանալ. հավիտենապես անանց մնալ:

Սակայն զգեստի սպիտակությանը, անմահի մահվան [հարցին] մի փոքր ակնարկ եմ [միայն] զցելու:

Բոլոր արարածներն անմխիթար սզի մեջ նստած էին, որովետև այս մարդն անմահ Աստծու անմահ պատկերն է: Մահվան էր մատնվել, անփարատ խավարի մեջ: Արդարներն էլ, մեղավորներն էլ առհասարակ սուգ էին անում. խզո ծանր հանդերձներ ունեին, որ խավարի նմանությունն էին տալիս: Եվ այս արարածներից ոչ ոք չէր կարողանում աշխարհից սզի

ծանրությունը վերացնել. դա միայն նրա՝ միջոցով էր հնարավոր, ում միջոցով որ ամեն բան եղել էր:

Արդ իր մահով զարդարվեց, ոչ թե երկրային պատվական հանդերձներով, այլ իր ի բնե ինքնածագ լույսով, որեսզի աշխարհից խավարի իշխանությունը հալածի ու մադկանց թախալի տրտմությունը մխիթարի, հին տրտմության բիծն իր անապական լույսով սպիտակացնի: Եվ մարդիկ, որ իրենց սիրելիների մահվան համար տխրում ու մթնդում են, մահը գրեթե կենդանվույն (կենդանի-կենդանի) ճաշակում են,- թող նայեն Աստուծու Որդու մահվան զվարթությանն ու պայծառությանը, ու թող նրանցից վերանա անհույս տրիմության սուգը, հարության հույսով լցվեն ու այլևս մահվանից չսարսափեն, որ արարներին ու մեղավորներին դողի մեջ է գցել: Նրա համար ենք այստեղ մահվան ճառն ասում, որ նրա մեջ երկնքի արքայությունն ենք տեսնում, որն իր զորությամբ մեծ վստահությամբ եկել հասել է: Մահն արհամարհում ենք, որովհետև մենք մեզ արքայության հաուսով համակված ենք տեսել: Սիրել ենք լեռան այն տեղը, ուր մեզ [Տիրոջ] երկրորդ հայտնությունն է եղել, մանավանդ երրորդը: Մովսեսին մեած էինք կարծում, բայց կենդանի տեսանք. նա էր, որ ամենայն մարմնի հարության ավետիսը բերեց: Հրեաների կիսահավատ ազգը Եղիայի հոգին հափշտակելով էր ապաշխարում, իսկ մարմինն իբրև մի անպիտան գոյացություն դեն էր շրտում: Ամբողջ հոգով ու մարմնով եկավ ու երևաց, որպեսզի խղճահարությունը փարատի, եթե կամենան ընդունել: Կարծում էինք, թե մահվան թագավորությունը չի անցնում, [սակայն] այնտեղ, լեռան վրա, մահը մեռած, իսկ կյանքը թագավորելիս տեսանք:

Եթե ուզում եք, նորից լեռան քարոզին կանդրադառնանք, մանավանդ, որ այն լեռից չենք էլ իջել, ու քանի դեռ այնտեղ ենք, հենց այնտեղի մասին էլ կխոսենք, ինչ որ այնտեղ եղել է՝ դրանով էլ հանդես կգանք, իսկ եթե այն լեռից ուրիշ կարիքների համար իջնենք, դարձյալ նույն լեռը կբարձանանք. երկու անգամ լնի, թե եեք, նույն կանենք, մինչև որ մեր ճառն ավարտվի. այն լեռան շուրջն էլ կփակենք: Բայց առայժմ այնտեղ՝ վերևում, Պետրոսին պետք է որ հարցնենք. «Այդ լեռն ինչու՞ սիրեցիր և ուզում ես այնտեղ քեզ համար, քեզ ու ընկերներիդ համար բնակություն հաստատել: Եթե դա անես, փոքր-ինչ ավելի ատշաճ է թե՛ քեզ, ե՛ Տիրոջ և թե՛ Մովսեսի համար»:

Եվ դա ինձ շատ տեղին է թվում: «Մեղներից,- ասում է,- հարություն առավ, դրա համար կամենում են, որ այստեղ մնան»: Նա, որ ծածկի կարիքն ունի, հարություն է առել, բայց դեռ հարմար չէ դա հարություն կոչելը, այլ երազ ու աչքով տեսած: Ուրեմն տակավին հարություն առածի մասին չտեղեկացած՝ հարության մի փոքր ճաշակ է քեզ ցույց տվել, և դու, տեսնելով, ապշել ես: Եթե

քեզ համար այդքան փաավոր էին նրանք, որ անփոփոխ պիտի ընդունվեին, դու արդարև առավել ևս վտանգվում էիր: Սակայն չեմ կարող քեզ մեղադրել, որովհետև դեռևս հրեախառն ես, օրենքներում գրվածները կարդում ես, բայց արժանին ըմբռնել դեռ չես կարողացել:

Մովսեսի դեմքը լեռան վրա շքեղացավ, իսկ ձեր հայրերը չկարողացան նրա երեսին պարզ նայել. դու էլ հոգիդ մարմնական այդ վարագույրով ես ծածկել: Մովսեսը, դեմքը ծածկելով, նրանց իրենց մոտեցրեց, և Տերն այդ քողը ձեր սրտերից վերցնում է. հենց սկզբից ձեր ազգի հանդեպ մարդասիրությունի ունի: Իր ծառաներին «աստվածանուն» կոչելով մեծարել էր, իր փառքով զարդարել նրանց: Ժողովուրդն ասելությունից փախչում էր նրանից, իսկ նա հրաշագործություններով ու ճարտարությամբ նրանց բորբոքում էր, որպեսզի իր մարդասիրությունից սովորելով՝ կարողանան աստվածությունը պարզերես տեսնել: Սա հենց նա է, ով ձեզ շատ բաներով կրթել է, որպեսզի այսօր արժանի լինեք աստվածության լույսի ճաճանչը տեսնելու: Սակայն դու այսօր նրանցից ավելի լավ երևացիր. թեև զարհուրեցիր, բայց փախուստի չդիմեցիր: [Ահա] այդպես երևաց, որ Աստծու սերը քո մեջ ավելի մեծ չափով է բնակվել, քան նախնի ժողովրդի մեջ:

Իսկ հիմա քո շուրջը լավ նայիր. ու՞մ հետ ես ման գալիս, ու՞մ կողքին ես նստում, ու՞մ ուղեկիցն ես և կամ ու՞մ համախոհը: Դու չէ՞իր, որ գեղեցիկ վկայությունը տվեցիր, Քրիստոսին Աստծու Որդի դավանեցիր, ո՞վ քաջ: Աստված ես դավանում, բայց տաղավարներու՞մ ես բնակեցնում: Դա ոչ միայն Քրիստոսը չի հավանի, այլև ո ընկերակից Եղիան: Նրա բարձրանալը դու տեսել ես, և նրա մեծության պատիվը քեզ երևաց էլ է: Եթե դա ճշմարտապես հասկացել ես, այդ բանն արժանավորապես չես ասում: Ինձ ասա՛, հյուղակներդ ի՞նչ նյութերից ես սարքելու: Մի՞թե փայտից ու խոտից, տասներկու [աշակերտներից] ո՞վ մեծո՞: Լավ ուշք դիր, հրեղեն կառք ունի, բոցեղեն երիվարներ: Հուրն ու խոտը միասին չեն բնակվում: Բայց եթե անգամ դա դուրս թողնի, ինքը նույն պատվով զարդարված է [արդեն]: Եթե այդպես չլիներ, բոցի առաջ ինչպե՞ս հանգիստ կկանգներ:

Այսօր քեզ մի փոքր սպիտակություն է երևացել, և դու ոսքերդ ես շաղ տալիս: Ուր Եղիան է բնակվել, է՛լ ավելի պայծառ է, քան որ քեզ է երևացել: Իսկ դու այդպիսի մարդուն տաղավարնե՞ր ես հրավիրում ու նար շքեղ պատվից չե՞ս պատկառում: Աշխարհների Տիրոջդ էլ դարձյալ կարոտությա՞ն ես տանելու, և տե՞ղն է, կարծում ես: Իմացի՛ր, դա բոլորի տեղն է, բոլորի կարոտությունը վերացնելու տեղը: Տեղի շնորհիվ չէ, որ դա պատվական է երևացել, այլ դրանով է, որ տեղը շքեղացել է: Մի փոքր սպիտակ զգեստից

զարհուրել ես, բայց երբ նախնյաց իշխանությունը փառքի մեջ տեսնես, երկրային պատվական տեղերից և ոչ մեկը դրան արժանի չես համարի: Այն խոսքը, որ վերուստ է եկել, դրա՛ տեղը համարիր, փառքն ու անապատում վայելչությունը: Դու դրան նայիր, նրա ձայնի հետ սիրալի՛ր եղիր: Այժմ քո մարմնի աչքերը լույսով են լցվել. ապա դու ամբողջությամբ էլ լուսալից կլինես: Դու էլ հենց ինքնդ քեզ հազիվ կկարողանաս հասկանալ: Սակայն արքայության Տերը տաղավարի կարոտ չէ: Արժեր, որ դա ասկանայիր ամպի օրինակով, որ անապատում ժողովրդի անբավ բազմության համար կապեց իբրև ծածկ (Մարկ. Թ 6, Ղուկ. Թ 34): Ամպը բավարար հովանի էր, իսկ ամբողջ գիշեր կրակի լույսն էր առաջնորդում: Ու եթե չարերին էր այդպես գթում, որքա՛ն առավել ձեզ՝ տառապածներիդ: Ամեն ինչ թողե՛ք ու նրա հե՛տ շրջեցեք, ինչ որ ձեզ ասում է՝ լսեցե՛ք, և ձեր ամեն ցանկություն նա կկատարի: Հենց այդ տեղում նրա փառքի տապից մի փոքր խորովվեցիք, և ամպը ձեզ վրա արագ-արագ թանձրացրեց: Եթե փոքր-ինչ ուշանար, դուք էլ, այդ տեղն էլ բոցակեզ կլինեիք: Ի բնե տաք են այս տեղերը, ուր ամառային հրդեհներ են բորբոքվում: Եվ եթե չափավոր լույսն է այդպիսի տապով հարվածում, ապա ի՞նչ ես կարծում, ինքնածագ լույսը, որ թույլ տար ցամաք ու ծով բռնել՝ առհասարակ չէ՞ր այրի: Այդ լույսից մի փոքր ճաճանչ երևաց Պողոսին ու թեև նրա մարմինը չայրեց, բայց նրա աչքի լույսը վառեց. թեև նրան ուրիշը շնորհվեց, բայց նախկինը կորցրեց: Ինքն իրեն իր ողորմածությամբ է ծածկել. գրեթե ի վիճակի չեն նրա աստվածությունը տեսնելու: Տեսա՞ր. Աստված ուր որ արարածների հետ խոնարհությամբ է խոսում, իր մարդասիրությունն է ի հայտ բերում: Եթե ինքն իրեն դրսևորեր, ինչպես որ կար, այս արարածները նրա առաջ կապականվեին:

Արդ Պետրոս տերը թող նրա համար տաղավարներ սարքել չմտածի, որովհետև այդպիսի գործի ժամանակը չէ, ոչ էլ դու շինարարի տեսք ունես. հյուսնությունից անտեղյակ ես, ոչ էլ պատին քարեր դարսել գիտես: Ուսուցիչ կոչվեց, իր արվեստը քեզանից թաքցրեց: Բայց եթե դու մոռացկոտ ես՝ չգիտեն: Միշտ էլ քո աչքի առաջ է գործել ու գործում է և շատ է ցանկանում, որ սովորեք ե՛ խոսքով, թե՛ գործով: Ինչես որ ինքն է առանց մարմնական (ֆիզիկական) նեղությունների իր արվեստն առաջ տանում, նույն նահատակության էլ ձեզ է վարժեցնում: Քնած մի՛ խոսի և ճշմարտությունը, երազախաբ լինելով, վայրիվերո մի՛ պատմի: Երկնային մանրագործի հոտն ես առել, դրա պես էլ վերաբերվել սովորիր: Շտապիր ստվերաշուք տարրերից վեր բարձրանալ, քան թե դրանց տակ նստել: Մի՛ աղոթի, որ այդպիսի չքնաղ լույսն անապական լուսավորությունից ծնակ տեղեր գնա բնակվի: Թեև

ջրայինները տեսնում էին ու դեպի ցամաք էին ուղղվում: Եթե ջրայինների վա ազեր, բոլորին վեր կքաշեր կտաներ: Եթե իշխանություն լիներ, հրեշտակներն երկնքի լույսը թողած՝ դեպի այդ լույսը կիջնեին: Այն լույսը երկնքից երկրի վրա է երևում, երկնավորներին երկինք է տանում հանում: Ու երբ երկրից վեր է ծագում, վերևներին ցած է իջեցնում: Այդ լույսով է, որ Հակոբը Տիրոջը լուսեղեն սանդուղքի վրա տեսավ: Լուսեղեն տեղերում է Եղիան բնակվել. այն լույսը թողած՝ դեպի այս լույսն իջավ եկավ: Այդ լույսին էր Մովսեսը հանձնվել. նրան Նաբավ լեռան վրա էր ազդարարվել, ու շտապեց, դեպի այդ անձկալին եկավ: Տեսնու՞մ ես, թե ինչպե՞ս են երկուսն էլ լույսին փարվում: Այն բազում խոսքերից, որ նրա հետ խոսում են, չեն հագեցնում: Այդ լույսը ծագելիս՝ արեգակը խավարեց, ինչպես աստղերը՝ արևից. դրա պատճառով արփին չերևաց: Ու քեզ երանի են տալիս, որ դա տեսար, դեպի այն կանչվեցիր. ամեն աշակերտ իր ուսուցչի արվեստն ուսանելու է շտաում: Քո այն տաղավարներից չհանե՞ց նա քեզ: Ինչ-որ հյուղակներ եք ծովեզերքին սարքել. հանուն այդ լույսի ձեզ դրանք թողնել տվեց, որպեսզի այդտեղ ոտք դնեք, դրան ընտելանաք, այդտեղից գաք, դրա մասին խոսաք, դրանով զգեստավորվելու արժանի լինեք: Թռչունների ցեղը չե՞ք տեսել. երբ ձագերի թևերը թավանում-աճում են, բներին չեն մնում, այլ նախնյաց արվեստով են շարժվում. ինչ որ տեսնում են՝ մտքում են պահում: Բայց քանի որ թևերը մատաղաբույս են, տեղում են արագ-արագ շարժվում: Երբ բոլորովին խոշոր թևեր են աճում-մեծանում, արդեն վեր են վազում՝ ոստերի վրա խաղալով, ընկնելուց չերկյուղելով, ապա բարձրանալով օդից վեր՝ լեռների շուրջն են ճախրում, թռչելով ամպերն են քերում, առանց վարանելու երկրի վրա սողացող վնասատուների վրա են գնում:

Նման օրինակներով է Տերը ձեզ ուսուցանում. հրաշագործություններով ու մեծամեծ հրաշքներով է ձեզ կրթել, որպեսզի ամեն ինչով հոգ տանելով ձեզ իրեն միացնի, և որեսզի դուք էլ ուրիշներին մահից դեպի կյանք որսաք տանեք: Ձեզ կիրթ, հմուտ ու ավելի իրազեկ է դարձրել, որպեսզի ամբողջ աշխարհի համար կյանքի հնարք լինեք:

Բայց դու, որ այդ լեռան վրա չէի, թող քո միտքը լույս անուն լսելուն պես այս լույսի չկաչի, չկանգնի: Այս լույսը մենք միշտ ենք տեսնում, ո՛չ հիմարանում ենք, ո՛չ ապշում. ամենևին ոչ էլ մեր սիրտն է ինչ-որ երկյուղ ընկնում: Այլ ինչ որ գիշերն ենք, նույնն էլ ցերեկը: Որովհետև նյութեղեն արարած է ու մեզ սպասավորելու կոչված: Պղտոր, մթին, փոշեխառն, խտացած ես տեսել. ոչ էլ վերին երկինքը կարող է տեսանելի արձնել: Այնքա՛ն տարբեր է լույսից, ինչպես նկարվածը՝ կենդանիից: Աստվածությունն ինքն էլ մարգարեներին

բազում մասերով երևաց, ու նրանցից մեկն էլ Աստծուն չկարողացավ տեսնել, այլ ինչ որ նմանողությամբ տեսան, բավարար համարեցին: Իրենց կամով հանգստացան, իսկ նրանց խոսքերը գործելով ի կատար ածվեցին: Ինչպես որ այսօր լեռան վրա երևաց, յան էր, ինչ մշտապես էին տեսնում. ը՛չ այսօր նույն ձևով տեսան, ո՛չ էլ շփոթ ուրիշ մեկի իբրև Քրիստոս տեսան: Ով որ կար, նույնին տեսան, նաև ոչ խեղճ: Առաջինից մի փոքր ավելի վեր տեսան ու ապշեցին այն նշաններից: Եվ եթե կարծեիք, որ ձեզանից ավելին է, ձեր միտքն ավելի վեր չէր նայի: Աստծու հրաշագործությունն այս բոլոր արարածներն են: Այս աշխարհը ոչ մեկի հրաշագործությամբ չի ստեղծվել, որովետև աշխարհից առաջ ոչ ոք էլ չի եղել: Նա է, որ բնությամբ բարերարությունն ունի. ինչ որ կամենում է, կարող է անել, ոչ թե իր անկարոտ բնության կարիքների համար, այլ հանուն արարածներիս բավարարության ու անպակասության: Մարդուն բոլոր արարածներից ավելի շատ է սիրում և ուզում է, որ նշանների միջոցով անեղ բնությունը ճանաչեն ու այդ ճանաչողությունից սեր ու բարեկամություն ստեղծվեն:

Դարձյալ է՛լ ավելի վեր է քաշելու, ասես իրեն գահակից է անելու: Այսօր էլ ձեզ նույն սիրո զորությունը ցույց տվեց: Ոչ թե երկրային նշաններով, այլ երկնքի հաղորդակցությամբ: Մինչև այսօր մարմնավորներին էինք իբրև մարդ տեսնում, «ուսուցիչ» կանչում, մարմնացումը մարդեղություն էինք կարծում: Դրա համար նրանց միջից մարմնական տգիտությունը փարատեց, որպեսզի երկնավոր հայտնությամբ նրանց կրթի, և համակ մարմնականով մեջտեղ չելնեն: Այդպես էլ Գիրքն է ասում. «Նրանց առաջ պայծառակերպվեց»: «Պայասկերվելն» այլ ձևով չպետք է հասկանալ, քան նրանց առաջ աստվածակերպ երևալը: Որովհետև իր ժամանակին նրանց ևս նույն կերպարանքին բերեց: Նրանց աչքերը վարժվեցին Տիրոջ մարմնավորությանը նայելու. նրանց մտքերը չկարողացան երկինք բարձրանալ. նրանց աչքերը նրա փառքի լույսին դտպան. կարողացան նրա արժանի էությունը ճանաչել: Տիրոջ հետ բազում բարձր տեղեր էին ելել, բայց ոչ մտքով: Այն օրն այդպիսի տեսիլ՝ իմանալի լույս ցույց տվեց նրանց, որպեսզի նրանց ասվել ևս կրթի: Լեռը մարմնապես բարձրացան, իսկ մտքով նրանց բոլոր աշխարհիկ ցանկություններից վեր հանեց: Լեռը քաղաքներից ավելի բարձր է. նրանց բոլոր աշխարհներից էլ վեր բարձրացրեց: Մի ժամանակ Տիրոջ հետ Գալիլեա՝ լեռը բարձրացան, ուր նրանց երանություններ ավետարանեց: Երկնային խոսքեր չլսեցին, բայց նրանց միտքն այս երկրայիններից վեր չբարձրացավ: Իսկ այստեղ ինչ-որ խոսքերով չխոսեց նրանց հետ. լեռը լույսով երկնացրեց և լռելյայն նրանց երկնավորներ դարձրեց:

[Մի բան] հենց մեր բնության մեջ կա. երբ բազմամբոխ քաղաքում ենք շրջում, քաղաքային կարգերն ենք սիրում ճանաչել: Ավելի հաճախ ապշում ենք երկրային փառքի վրա, ու մեր մտքերը խոնարհվում են դեպի երկրային ապականացու բաներ: Եվ եթե մեծ պատաստությամբ ինքդ քո հանդեպ զգուշություն հանդես չբերես, հազիվ թե կարողանաս այս աշխարհի սին զվարճություններից ազատվել: Դրա համար Մովսեսն էլ, ժողովրդին Եգիպտոսից հանելով, քառասուն տարիներ անապատում շրջեց, ապա միայն կարողացավ օրենսդիր լինել նրանց համար: Իսկ երբ բազմամարդ քաղաքներում բնակություն հաստատեցին, դրված օրենքներն էլ չկարողացան պահել: Եվ ճշմարիտ է, որ ով այս երկրի վրա ապշած նայում է, նա երկինքը չի կարող տեսնել: Ապա մեր Տերն էլ երբ աշակերտներին Եգիպտոսից այն լեռը հանեց, նրանց երկնքի չգրված օրենքները սովորեցրեց. մեր առաջգա տեղն էլ գրված չէր: Գիրը մարմնականներից է խոսում, իսկ անգրությունն անմարմին էությունն է ցույց տալիս: Գիրը Մովսեսի մահն է պատմում, իսկ անգրությունը՝ աշակերտներին Տիրոջ հայտնությունը: Գիրն ինքն անցողիկ է, այս անցավոր աշխարհն է մեկ առ մեկ պատմում: Անգիրը անցավորներն է գրում, որպեսզի անանց դարձնի: Գիրն ասում է, որ Եդիան նյութեղեն պատվական բաներով է բարձրացել, անգրությունը Տիրոջ ու Եդիայանց երևումն է [է պատմում]: Ոչ թե ինչպես ուրիշներն են ցածրացել, այլ ինքն անձամբ է երկնքից ավելի վեր երևացել: Ոչ իբրև այրող բնություն՝ մարմնավորներիս ահաբեկելով, այլ իբրև փափուկ և արարող լույս. ինչպես արքայության ժառանգորդները՝ անմարմինների տեղերում զգեստավորվելիս: Տերն այդպիսին է երևացել և ըստ իր էության [իր] ծառաներին նույն փառավորությունը շնորհել. եթե այդպես չլինեին, ոչ էլ կկարողանային անկեզ հրին մոտենալ: Պետրոսյանք էլ, որ աստվածային փառքի ականատեսներն էին, այս ծանր մարմնականներից վեր էին քաշվել՝ մինչև իմանալի հրեշտակների բնակությունները հասնելով: Մահով՝ շատ վեր էին անցել կանգնել, ինչպես երեքը, այնպես էլ երեքով: Մահից ոչ միայն չէին երկնչում, այլև մահը շատ տեղերում մարդկանցից հալածական էին դարձնում, որովհետև նրանց աղքատությունը չափազանց սաստկացել էր: Իբրև երկնչոտներ էին ելել՝ երկյուղից վեր լինելու համար. մարդու որդու հետ էին ելել և նրան այնտեղ Աստծու որդի տեսել. իբրև առավել, քան տգետներ են ելել և այնտեղ կատարյալ գիտությունը սովորել. նրա՛ հետ են ելել, որին կույսից ծնված գիտեին, և այնտեղ իմացել են, որ նա այս աշխարհից էլ առաջ Հորից է ծնվել. նրա՛ հետ են ելել, ով Հովհաննեսի ձեռամբ էր մկրտվել, և այնտեղ նրան են տեսել՝ իր փառքի լույսի անմատույց ճառագայթների մեջ բնակված. նրա՛ հետ են ելել, որ հետիոտն գնալով հոգնում

էր, և իմացել են, որ նա քերովբեական կառքն է նստում. նրա՛ հետ են ելել, ում հրեաները մահով էին սպառնում, և իմացել են, որ նա մահվան ու կյանքի տերն է. նրա՛ հետ են ելել, ում աղաչում էին իրեն մահվան չմատնել, և իմացել են, որ մեռյալների մոտ չի գնում (Աբրահամյանք չեն կարող Մովսեսյանց մոտ գնալ): Նրանք, ում որ մահվանից ետ էին պահում, ժամ ապռաջ շտապում էին նրա մահը տեսնելու: Նրանց հանուն արքայության այն լեռը բարձրացեց ու հասկացրեց, որ առանց Միածնի մահվան ոչ ոք չի կարող արքայությունը ժառանգել:

Եվ եթե այս երկու մասերն իրենց մեջ երկնային ու երկրային բարություններն ունեն, մեր Տերն արդյոք ինչու՞ էր իր ասկերտներին պատվիրում ու ասում, որ ոչ մեկի ամենևին չպատմեն այն հայտնությունը, որ իրենց երևաց: Սա Քրիստոսի վարդապետության սովորությունն է. երբ ախտաժետներին (հիվանդներին) բժշկելով իր մարդասիրությունն էր ցույց տալիս, նրանցից շատերին նույն բանն էր պատվիրում. «Ոչ ոքի,- ասում էր,- գյուղերում թե քաղաքներում, զուր տեղը չպատմեք»: Որպեսզի դու էլ նույնը սովորես, քո ողորմածություններն աշխարհով մեկ չհայտարարես: Իսկ եթե պետք էլ չլինի ցույց տալ՝ թող խոսքերի փոխարեն զործերը մունետկեն: Աստված այս ամբողջ աշխարհը ստեղծեց ու մեզ տվեց և դա մեզ համար երախտիք չհամարեց, այլ միայն [պատվիրեց], որ այն ճանաչենք ու իր կամքով ընթանանք: Աշակերտներին աստվածանման լինել պատվիրեց, որովետև նրանց իրեն ժառանգ հաստատեց, նրանցով էլ՝ ամբողջ աշխարհը: Երբ իրենց ուսուցչին բոլոր մեծ-մեծ բաներն Աստծով անեն, իրենց մտքերը միայն ծածկագետին (Աստծուն) թող հայտնեն: Դարձյալ սաստիկ նրանց խնայեց. մի՞թե մարմնականով պետք է պարծենան այն սքանչելիքների համար, որ այնտեղ կատարեցին ու տեսան: Թշնամիների մեջ էին շրջում, ոչ թե բարեկամների, ավելին՝ [ապրում էին] կեղծավոր մեկնիչների առաջ, որոնք ճանճերի պես վերքասերներ էին. ուր թարախ էին տեսնում, վերքն էլ՝ ավելի էին բորբոքում: Նենգավոր մարդկանց խոսքերը սրանից էլ ավելի չար էին լինում, ինչպես որ հենց նրանք էլ ժողովրդի մահվան պատճառը եղան, նրանք՝ ոչ միայն հողածին մարմինը, այլև անմահ Որդուն սպանողները:

Նոր Նավակատիք անողներին, որոնք նոր գինու ճաշակն էին առել, պնտվիրեց գինու զորությունը հին տիկերի մեջ չզցել, որովհետև [սրանք] չեն կարող նրա ուժը հանգիստ ընդունել: Նրանց մեծ չարիքից ետ պահեց, որովհետև գիտեր, որ տիկերը կատռվեն ու գինին կթափվի, նրանց վրաս կպատճառի, ինչպես որ Կայափայի ժամանակներում եղավ (Մատթ. Թ \$\$\$\$
Մարկ. Բ 22, Դուկ. Ե 37): Երբ մարդու որդին Աստծու զորության աջ կողմում է

նստում, տեսնում ենք, որ նրա պատմությանը հին տիկի պես պատռվում է, ամբողջովին թափվում-ընկնում է աստվածային աստիճաններից: Եվ եթե Տիրոջ այն խոսքերից չարաչար ծեծված զարկվում-ընկնում են, ապա ինչ կարծիքի ես աշակերտների լսած երկնային սքանչելիքների մասին: Կրակի պես նրա դեմ չէ՞ին բորբոքվում, իրենց ու նրանց առհասարակ չէ՞ին այրում: Երբ նրանցից լսում էին, իսկույն հարցնում էին, թե վերին տեսլիքի գերազանցությունը ո՞րն էր: Ու եթե նրանց Մովսեսի ու Եղիայի մասին էին պատմում, սուտ էին համարում, որովհետև չէին կարողանում հայտնապես ցույց տալ: Եթե ասում էին՝ եկան երևացին ու գնացին, դա արդար չէին համարում. այն ժամանակ հավատի իմացությունը չունեին և ինչ որ հենց աչքերովն էին տեսել Տիրոջից, չէին հավատում: Դարձյալ՝ եթե սպիտակ զգեստների մասին բան էին ասում, կորստյան արժանիներին կրկնակի կորուստ էր հասնում. կա՛մ նրանց խոսքերը չէին լսում, կա՛մ սպիտակ զգեստներն էին մեջ բերում, որովհետև սոսկ երկրային բաների մասին մտածողներ էին ու անհավատ ականջներ. իմանալի հայտնությունը չէին կարող տեսնել: Նրանք այնտեղ՝ լեռան վրա մարմնավոր հայտնությունն անգամ չտեսան, ուր մնաց երկնային գորությունը ճանաչեին, այն, ինչի հայտնությունը միայն նա՛ գիտե և ում որ կամենում է, ինքն է բոլոր առ բոլոր հայտնում: Լոկ գրքի միտքը բավական է հավաքել, ոչ թե խոսքերով պատմել ու մեկի լսելիքներին տարածել: Որովհետև մի բան, որ խոսքով է նկարագրվում, նրա երևումը մարմնավոր ձև է ստանում, իսկ երկնային փառքը սրանից թե՛ մարդկանցից, թե՛ հրեշտակներից ավելի վեր է կանգնած: Պողոս առաքյալին լսիր, որ ոչ միայն լեռը բարձրացավ, այլև երրորդ երկինքն ու դրախտ, սրբերի պատրաստությունը տեսավ, պարզևատուի խոսքը լսեց, բայց դեմ հանդիման չկարողացավ հանդիպել և խոսքը, որ վերևից իրեն ժամ առ ժամ հասավ, նրա գորությունը ոչ մեկին չկարողացավ կրկնել: Նույնը նաև երկնային պարզների մասին, որոնք պատրաստ պահվում են. դա ասաց, բայց այս երկրավոր պատվականներից որևէ մեկին չկարողացավ նմանվել. իբր թե ճշմարիտ հանդերձյալ էր: Եվ մենք այս բանի վրա ենք հույս դնում, որ Պողոսը տեսել է ու պատմել չի կարողացել: Քրիստոսի հավատացյալները լիովին իմանում են, իմացածը տեսնում, և մենք հույսով այնպես ենք վստահում, ինչպես երանելի Պողոսը:

Արդ այն ամենի մասին, ինչ առաքյալները լեռան վրա Սուրբ Հոգով տեսան, թրահավատ ժողովրդի լսելիքներին թույլ չտվեց պատմել: Նախ՝ որովհետև չէին էլ կարող նրանք պատմողներ լինել, ապա նաև որովհետև նրանք ում որ պատմում էին, լսելու արժանի չէին: Այդպես էլ ինքը Տերն ավելի

առաջ սովորեցրել էր առաքյալներին. «Սրբությունները,- ասել էր,- շներին մի՛ տաք ու ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛ գցեք» (Մատթ. Է 6): Շան համար մաքուր կամ պիղծ կերակուրը մեկ է, իսկ խոզին պատվական մարգարիտից ավելի լավ է թվում գարշելի տիղմը, որի մեջ թավալվում է: Այս տեսնելը պարզևներ թվողին չար է թվում, իսկ արտաքինը տեսնողներին՝ ավելի ևս չար: Դրա համար էլ մեր Տերը լուսավոր խորհուրդը լույսի մանուկներին հայտնեց, որպեսզի վկաները լինեն ճշմարիտ լույսի, որ նրանց այնտեղ՝ լեռան վրա երևաց: Նույն լույսով էլ վացված պետք է մնան, որպես անստվեր ճառագայթներ: Իրենք են լինելու նրա լուսավորության քարոզիչները, ովքեր որ հենց եղան ու վախճանվեցին: Բոլոր արարածները, որոնք խավարի մեջ ու մահվան ստվերներում էին նստում, այն անանց լույսին են դիմել, նույն լույսով լուսավորվել ու լուսավորվել են՝ մինչև նույն լույսի երկրորդ հայտնությունը: Նույն Տերն էլ գալու է երկնային լուսավոր գործով: Մեռյալներն ու արժանավոր բոլոր կենդանիները նույն լույսով են լուսավորվելու՝ հավիտյանս անփոփոխ ու անվախճան:

Իմ մտքում սաստիկ կասկած առաջացավ, երբ ճառիս ավարտին մոտեցա: Անդրադարձա, որ սրա մեջ չքննված բաներ մնացին, որովհետև փոքրիշատե ավելի լավ տեղյակ ենք մտախույզներին, որ ի շահ իրենց և ի փառս սուրբ եկեղեցու՝ անմեղորեն քննում են խոսքի զորությունը: Այստեղ էլ հենց՝ մեր այս աշխարհում տեսնում ենք, որ շատերն ըստ առաքելական կանոնի առաքինությամբ ու հաստատուն հավատով են առաջնորդվում, և դրանց համար հրձվում ու ցնծում է օտարազգիների սուրբ եկեղեցին: Մեծ Հայքի ուխտավոր գավակները, այս հավատով տոգորված, ուսումնասիրությունների մեջ էին խորամուխ լինում, վաճառաշահ օգուտներով զբաղվելով մեծ հարստության հետամուտ չէին լինում, այլ այդպիսիների մշտական գործն էին պահքն ու աղոթքները, իրենք իրենց հոգեսպան բոլոր չարիքներից [հեռու] պահելը: Նրանք, որ սուրբ կտակարաններում կարդում են, գիտեն, ուրիշ հարցեր ու խնդիրներ ունեն այս ճառից իրար ու ինձ հարցնելու: «Մովսեսը,- ասում են,- մեռելներից մարմնով հարություն առավ ու նաբավ լեռ՝ մեր Տիրոջ մոտ եկավ: Ահա Եղիային էլ ոչինչ չէր խանգարում, որ ինչպես արագ բարձրացել էր, ավելի արագ էլ գար [Տիրոջ մոտ]: Մովսեսի վրա չենք զարմանում, որ Եղիայի արագությունն ուներ: Բայց մարմնով հարություն առավ, թե՞ հոգով, ու նրանց առաջ կերպարանվեց: Եթե մարմնով հարություն առավ, դա իր համար ճշմարիտ ցավ եղավ: Նա, որ Աստծուն աղաչում էր մի անգամ չմեռնել, արդյոք կրկին մա՞հը ճաշակեց: Մանավանդ, որ Եղիային անմահության մեջ էր տեսել, Տիրոջը՝ արքայության մեջ, նախնյաց

փառով [պսակված]: Ինքն էլ հողից եկել, արագ-արագ կրկին [հող] պիտի դառնար: Ճառի այդ տեղը,- ասում են,- չափազանց դժվար է»:

Այդ հարցումն ինձ ծանր չի թվում: Բան կա, որ դարձյալ գրքից վերցնելով եմ ատասխանելու, և բան կա, որ չգրված իսկությունից՝ աստվածային զորությանը նայելով: Եվ դրանք հակասական չեն. գիրը լսելիքներին աստվածային պատվիրաններն է իմացնում, իսկ անգրությունը՝ աներևույթ մտքեր: Երկուսն էլ աստվածատուր շնորհներ են, որ աչքերը տեսնում են, շրթունքները՝ կարդում, ականջները՝ լսում: Առանց գրերի՝ մեկնությունը միտքն է, որ բերում է: Արդ քաջ սերտողների համար որովայնը մեծ է, ծովը՝ անձանձրույթ, իսկ մեծ բեռը՝ անձանրանալի: Որքան որանում է, շատությունից չի գոհանում: Աստծուն աղաչելով երկուսն ստանալով՝ երեքին էլ է հասու լինում: Դա կարելի է տեսնել նրանց մեջ, ովքեր առանց գրի էլ խորամուխ են եղել Աստծու Որդու սիրո մեջ և գրվածներն էլ են մշտապես ըմբռնել: Աստծու չգրված օրենքներից ոչինչ նրանցից ծածուկ չի մնացել, ինչպես որ առաքյալն ինքն ասում է. «Այն, որ աղոթքի ենք կանգնում, ստ աժանավույն չենք իմանում, այլ Հոգին ինքն է հեծության ժամանակ օգնության հասնում, Աստծու մոտ անմռունչ բարեխոսում»:

Բոլոր սրբերն առանց բան պատմելու են Աստծու հետ խոսում, վերևից ծայն արձակելով չէ, որ նրան լսում են: Եվ ինչ որ ասում կամ գրում են, գրի առնել չեն կարողանում: Եվ Աստծու չգրված օրենքներն իրենց առաքինի գործերով են հայտնի անում: Ու երբ նման զորությունը մեր հոգիներում ենք պրպտում, կարողանում ենք Աստծու խոսքի գաղտնիքները ծածկապես էլ իմանալ, իսկ տվչությունը պարզև, որ մեզ է շնորհել, լեզվով ենք արտաբերում, որպեսզի երկնային հնչումն ուրիշների լսելիքներին իմաց տրվի:

Եղիան երկու մեռելներին ու Եղիշաներին հարություն տվեց: Սակայն սրանց ոչ ոք կրկնամահ չի ասում, այլ մի կյանք ու մի մահ [ունեցող]: Մեր Տերն էլ մեռելներին հարություն տվեց. նույն բանն էլ սրանց համար է ասվում: Մովսեսն էլ նույնքան ուներ, որովհետև իր առաջին մահվան ժամանակ չհիվանդացավ: Տերն ինքը նրան դեպի լեռը կանչեց ու Տերն ինքը, որպես տեր, նրան առանց չարչարանքների գերեզման հանձնեց: Սրան չարժե անգամ, որ մահ ասենք, այլ փոխակերպություն: Դավիթը սա նույնիսկ քուն է անվանել. «Ես ննջեցի, քուն մտա, զարթնեցի. մեր Տերն էլ օգնական է»: Հենց դու, որ հարց ես տալիս, ամեն օր քուն չե՞ս մտնում, առավոտյան վեր կենում կանգնում. արթնանալուդ համար չես տրտմում, որովհետև գիտես, որ նորից ընկողմանելու ես: Ապա եթե փորձես ասել, որ սա ավելի հեշտ է, նա՝ ավելի դժվար,- մի՛ ասի սխալ ես կարծում. Մովսեսի համար մահը ազար անգամ

ավելի հեշտ էր, քան քո քնելը: Եթե քաղցած կամ ծարավ քուն մտնես՝ անընդհատ կուտես ու չես կշտանա, աղբյուրից աղբյուր կշրջես ու չես խմի: Եթե չափից ավելի անքուն [մնալ] ստիպվես, առավոտը տեսնել կուզես: Եթե պատահի, որ ուտելիքների կամ մարմնիդ առողջության բերումով կեղտոտես կամ եազախաբ լինես, միտքդ այս ու այն կողմ կմղվի, ցերեկը դրանք քեզ վատ կթվան: Մեր շարժումներում ամենևին խաղաղություն չկա: Իսկ դրանից մեր Տերը Մովսեսին արկեշտագույնս դեպի իրեն քաշեց. ծերությունը նրա գեղեցկությունը չթռռոմեցրեց. հիվանդությունը նրա մարմինը չապականեց. ոչ առաջին անգամ հեծությամբ դժոխք իջավ, ոչ էլ Տիրոջից վերջին հրաժեշտի ժամանակ դանդաղեց թերևս: Դրա համար Աստված ինքը նրան մահ քաշեց, դրա միջոցով փոխադրեց նրան ու ծածկեց: Աստուծու ձայնը նրան կանչեց: Ամպը նրանց վրա հովանի արեց: Հենց ինքն էլ Մովսեսին շտապ իր սիրելու մոտ բերեց, ինչպես որ մեր Տերն ինքն էլ ասում է. «Հայրը մեռելներին հարություն է տալիս ու կենդանացնում է»: Որդին, Հորը դիմելով, Ղազարին հարություն տվեց: Հայրը, Որդու հետ մեկտեղ, Մովսեսին հարություն տվեց, որովհետև հենց նար կողքին երևացին:

Ըստ այսմ իմացիր Սուրբ Երրորդության անքակտելի միությունը՝ ինչպես արարչագործության ու փրկության, այնպես էլ հրաշագործության ու հարության-նորոգման ժամանակ: Մովսեսի՝ մարմնով հարության հարցում թող ոչ մեկի միտքը չթուլանա: Իմ այս ճառաստությունն օրինակ-առակ չէ դժոխքում մեատան, Աբրահամի, կամ էլ արքայության մեջ Ղազարի մասին: Այն հանդերձյալների մասին է հայտնում: Դու ես տեսել, և այն աշակերտների միջից ոչ մեկը վկա չէ, որովհետև գաղտնիքները միայն Աստուծուն են հայտնի: Իսկ որ արդարև երևացել են՝ դա մարդիկ էլ, Աստուծու հետ, կարողացել են տեսնել:

Բայց ես ամենքին էլ խիստ աղաչում եմ [, որ իմանան]. ինչ որ երկրից է ու այսեղ, մեծապես այն է, որ իմաստուն մտքերի կողմից քննվում է. միչ բան կա, որ մեզնից թաքուն է: Իսկ ինչ վերաբերում է աստվածությանը, աչքի թարթումը [քիչ] չափ բան կա, որ իմանալի է: Որ վեմը ջուրն է տվել՝ բոլորս էլ գիտենք, բայց թե ինչն է տվել՝ դա մեզնից ծածկված է: Ինչպես էր նրանց հետ գնում՝ դա մեզ Պողոսն է մեկնում, բայց թե ինչն էր առանց գետնին դիպչելու գնում՝ Պողոսն էլ չգիտեր: Հենց Պողոսին որ իրեն էլ հարցնես երկինք իր բարձրանալու, ճանապարհի նշանի մասին, չի կարողանա պատմել: Ինչն է եկել՝ Մովսեսն ինքն էլ չգիտե: Հավատում ենք, որ անմարմիններն Աբրահամի ճաշը կերել են: Հավատում ենք նույնպես, որ Մովսեսն ու Եղիան մեր Տիրոջ մոտ՝ Թաբոփր են եկել: Եվ եթե մեկն այս պատճառով երկմտանքի

մեջ է ընկնում, երեք սյուներն են դարձյալ մեզ վկայում: Իսկ եթե մեկ ուրիշն անհաճար մտքով ասի, թե սոսկ տեսքով են երևացել, դա հնարավոր չէ, մի՛ հավատա: Հայելու եմջ է, որ իրերն ստվերներ են երևում: Աստվածաշունչ Մատյանը չի ստում. այնտեղ առակով ասվում է. մադկանց միջից վկա չեն փնտրում, այլ խոսքի մեկնությունը մտքին են հասկացնում: Իսկ ուր որ ճշմարտությունն է, այնտեղ էլ պարզաբանությունն է հստակ երևում:

Եսային ասել է. «Տիրոջը բարձր աթոռին տեսան»: Տեսիլքը ճշմարիտ էր, բայց նա չէր կարող մեզ տեսիլքի ինչպիսի լինելը ցույց տալ: Աստված ուր որ ուզում է, իր ծառաների՝ մարգարեների հետ առակներով է խոսում, իսկ ուր որ առավել խոնարհությամբ է խոսում, ինքն իրեն է զգալի դարձնում, որքան որ մեր բնությունն է ի վիճակի տեսնելու: Եվ հրաշակերտ վկաներ է բերում թե՛ հրեշտակների, թե՛ արդար մարդկանց միջից, որին կենդանիներից, որին մեռածներից: Այսպես այն տեղում Աստված Մովսեսի ձեռքով բազում հաշքներ գործեց, նրան բոլոր մարգարեներից առավել մեծարեց, մեռելներից նրան հարություն տվեց, նրան տեսանք, որ Քրիստոսի հետ կանգնել էր խոսում էր: Ինչպես որ տեսանք այնպես էլ վկայում ենք: Սակայն նրա հարության ինչպիսին լինելը Տիրոջն է միայն հայտնի: Որ Մովսեսն ու Եղիան եկան և Քրիստոսի հետ խոսեցին, ու երեք առաքյալները տեսան,- սրանց խոսքերի ճշմարիտ լինելը վկայում ենք: Իսկ ինչ որ մեր աչքերի համար հարավոր չէ, Աստծու համար հնարավոր է. ամեն ինչ: Եթե այն լեռան գեղեցկության ու վայրերի վայելչության մասին կամենում եք հաճույքով ունկնդրել, ցանկալի տեղի տեսիլքը ձեզ համար մի փոքր կկրկնեմ: Ավետարանից լսած լինելով՝ բոլորդ էլ տեղը գիտեք, բայց մենք անձամբ ենք հասել ու մեր աչքերով տեսել, ոչ թե առանձին, այլ բազում ընկերների հետ, որոնցից ոմանք կամքն էր լեռան վրա մնալը, ոչ թե մարմնական ախորժելի բաղձանքից, այլ Քրիստոսի սիրույն: Որովհետև այնտեղ բազում սքանչելի եղբայրներ են բնակություն հաստատել, որոնք ավելի հաճախ հոգով են առաջնորդվում, քան թե մարմնով: Եթե մեկն այն տեղին մարմնասեր մտքից մղված նայի, բազմաթիվ լեռների տեսքից ավելի վայելուչ կերևա: Նախ՝ որովհետև այն գալիլեացիների երկրում, մի մեծ դաշտի մեջ է նստած, և նրան բոլորովին մոտ ուրիշ լեռ չկա (սակայն ավելի հեռվում երևում է). ինքն էլ բարձր ու բոլորանիստ է, շուրջն ինքնաբուխ ջրհորեր, բազմաթիվ խիտ ու թավ անտառներ ունի, որոնք անձրևաբուխ ամպերի շնորհիվ պտղաբերում են, ու այնտեղ տեսակ-տեսակ քաղցահամ մրգեր են լինում, ուրիշ բազում քաղցր համադամներ, որթատունկեր՝ գինի պարզևող, որ թագավորների ըմպելունն է արժանի: Լեռան դիմաց փարթամ ձիթենիներ ու եղջերենիներ [կան], որոնց վրա չորս կողմից քամիներ [են

փչում], որոնց մեջ ամենից շատ հյուսիսայինն է զորավոր լինում: Շավիղը, որով Տերն է բարձրացել, շիփ-շիտակ է, այստեղ-այնտեղ վարպետորեն սարքած ճանապարհ. ով ցանկանում է ելնել ու աղոթքի կանգնել, հեշտությամբ վեր կբարձրանա: Երբ մեկը լեռան բուն գագաթը ելնի, առհասարակ ամբողջ դաշտը պարզ կերևա, արևելքից՝ մինչև Հորդանան գետը, արևմուտքից՝ մինչև Ծայրանացվոց աշխարհի մեծ ծովը, հյուսիսից՝ մինչև Տիբեական ծովը, հարավից՝ մինչև Նաբովթ Եգրայելացու այգին: Շուրջբոլորը բնակավայրեր են նստած, գյուղ առ գյուղ, այգի առ այգի, ու դրանց մեջ՝ բազմաթիվ քաղաքներ: Լեռան կատարին՝ հովտաձև գոգավորություն: Նրա վրա հազվագյուտ ծառեր էլ կան ու պարարտ հող: Եվ այն տեղում, ուր իր լուսավոր այծառությամբ երևաց նրանց Տերը, հովիտների արևելյան կողմում, ըստ Պետրոսի խոսքերի, միմյանցից հեռու երեք եկեղեցիներ են շինված, որոնք բազմաթիվ պաշտոնյաներ ունեն՝ կտրված բոլոր մարմնական ցանկություններից: Թեև մարմնով ապրում են, բայց մամնական հաճույքով (սեթևեթանքով) չեն շարժվում: Այնպես առաքինի են, որ նրանց մասին մեկը կկարծի, թե մարմնականի կարոտություն բոլորովին չեն քաշում: Երբեք ոչ ոքից ոսկի, արծաթ կամ հանդերձ չեն ընդունել, ոչ մի բան, որ մարմնի համար անհրաժեշտ է: Այլ ինչպես բոլոր միաբաններին էլ հաճելի թվաց, յուրաքանչյուր մարդ երմատանի փայտատ է սարքել, դրանով հովիտների պարարտ հողն է վարում, այնտեղ ցորեն ու գարի սերմանում, ուրի հունդեր էլ, թե լինեին՝ մարդու ապրուստի կարիքների համար: Եվ երբ հասկերը հասունանում են, ծայրերը խուզելով հնձում են, կալսում, քամուն տալիս, բերքը շեղջերի մեջ թափում, շտեմարանները զցում, նույնը դարձյալ իրենք երկանքով աղում: [Այսպես] մեծ տանջանքով օրըստօրե անհրաժեշտ ուտելիքն են ատրաստում: Լոկ հացով ու ջրով են կերակրվում՝ աղով համեմելով, ինչ որ «խորտիկ» են անվանում: Ուրիշ անուշ կերակուրներ էլ են սարքում. ձմեռ ժամանակ լեռնից նիվ (ուտելի խոտ) են քաղում, աղաջրով ու ծոթրինով թթու դնում: Սա, ինչպես իրենք են ասում, տոթ օրերին խիստ օգտակար է: Չորքոտանին երբեք լեռն ի վեր չի ելնում: Այնես մաքու են պահում վերելքի ճանապարհը, կարծես հրեշտակների և ոչ թե մարդկանց հավաքատեղի լինի: Որովհետև արդարև անմարմին են: [Իրենց] ամաններում կերակուրների համար յուղ չունեն, այլ միայն չմարող կանթեղներում օգտագործելու համար, որոնք երեք եկեղեցիներում մշտապես վառվում են: [Իրենց] սափորներում գինի չունեն, այլ միայն ի սաս տերունական սկիհի: Հիվանդների համար ավելորդ դարման չունեն, ոչ էլ օտարների համար պատրաստություններ, այլ նրանց միաբանությունն օտարների ու

հարազատների համար հավասար է: Այնպես որ ինչ-որ մարդատյացներ չեն, այլ գլուխ բարձրացնող մարմնականի դեմ մարտնչում-կռվում. թլինի թե ասպարեզն ուղիղ չբռնելով՝ հեծյալը քարավեժ լինի: Դրա համար չեն ուզում շարունակ ուտել, այլ սովորություն ունեն՝ ամեառները բնական բաներ հագնելու, ձմեռները շաբաթվա օերին հավաքելու, իսկ որ ավելի ուժեղ բան է նրանց մեջ, ամբողջ շաբաթը ձգելով գլուխ են հանում: Ապա եթե մեկը հեռու տեղից ի սեր սուրբ ժողովի (հավաքի) [նրանց մոտ] է գնում, կամ այնպես է լինում, որ բոլորն իրենց սովորական ծոմն ավրում են,- հոգևոր սննդի մասին են սաստիկ հոգ տանում, որպեսզի երբեք չդադարեն այն ճաշակելուց. թեև մշաես անհագորեն [հոգևոր սնունդ] են ստանում, բայց ավելի ու ավելի շատ են քաղցում ու ծարավում: Ոչ միայն հարյուր հիսուն սաղմոսներն են ձայնով ծոր տալիս, այլև եկեղեցու բոլոր սուրբ Կտակարանները, որոնցով փառավորվում են, այնտեղ՝ լեռան վրա սուրբ եկեղեցիներն են մեծածայն շքեղացնում: Մերթ ձայնով կարդում են, մերթ փոփոխաբար ծեսերն են կատարում. երբեք, հագեցած, դադար չեն առնում, գունդ-գունդ աբեղաներ միմյանց են փոխարինում. երեք եկեղեցիներում, հավասար բաժանելով, ցերեկային ու գիշերային պաշտամունքի կարգն են անվերջ պահում: Իսկ երեկոյան ու առավոտյան ժամերին ոչ թե հաջորդաբար միմյանց փոխարինելով, այլ իրար հետ միաբանած [են պաշտամունք անում] շատ ժողովուրդ է լինում՝ վեցերոդ և ոչ ուրիշ ժամերի:

Երեք եկեղեցիների մեջ մեկն ավելի մեծ է, քան [մյուս] երկուսը: Այն Տերունյան են անվանում: Այնտեղ դրված են երկու սուրբ մասունքներն առաքյալների, որոնք էլ հենց հիմնադրել էին տեղը այն օրը, երբ երեք տաղավարների անուններն էին ասում: Դրանք «Սուրբ Վկայարաններ» էին կոչել, և Մովսեսի ու Եղիայի անունով են հիշում: Բոլոր աղոթքները կիրակի են կատարում: [Մյուս] երկուսն էլ են գնում ու այնտեղ Աստծուն փառաբանում:

Բոլորն էլ մաշկազգայցներ (մորթի հագնողներ) են, ձեռնարվեստ էլ գիտեն: Մեկը զամբյուղ է սարքում. ոմանք նույն նյութից կողովներ են հյուսում: Եթե ուրիշ բան է պետք լինում, մշակում են՝ լեռից ցած իջնելով: Եվ այն ամենը, ինչ արհեստով մշակում են, այլ կարիքների համար չի օգտագործվում, քան մշհապես վառվող կանթեղների ձեթի կամ օդենիների (ոչխարի մորթիների) վրա ծախսելու, որոնցից մաշկեղեն հանդերձներ են ձևում: Դրանով են նաև իրենց բահ ու բրիչը հայթայթում: Իրար սիրով են սպասարկում: Այնտեղ օտարներին հյուրընկալելու խցեր էլ կան: Յուրաքանչյուրն իր վաստակից է հարկ տալիս (մաս հանում):

Նրանց մեջ ավելի մեծահասակները կան, որոնք հարկադրված չեն իրենց կարիքների համեմատ վճարելու. այդպիսիներին ավելի շատ հոգ է տանում, քան իրենք իրենց, որովհետև հրեշտականման են: Ոչ միայն արտաքին կարիքների համար են միմյանց սիրում, այլև յուրաքանչյուրն իր գաղտնիքն ընկերոջից չի թաքցնում: Եթե հանկարծ մեկի միտքը ծռվում է՝ տենչալի կերակուրները հիշելով, իր ցավը մյուսին է հայտնում, որն իրենից ավելի լավն է: Ընկերովի աղոթում են, և իսկույն անցավ առողջությունն է վրա գալիս: Որովհետև հիվանդացածն ինքն էլ չարի եկամուտ խորհուրդների դեմ կռվել գիտե, մանավանդ, որ առաջ էլ փորձով քննել է, որ բոլոր մեղքերը մարդու բնություն կերակուրների միջոցով են մուտք գործում: Եթե մեկը մեղքերի այդ դուռը փակում է, բազում չարիքներ նրանից հեռու են փախչում: Ոմանք որովայնի բտումը «բազմագլուխ գագան» են կոչել: Տեսա՞ր, նրանք էլ նախ դա են սպանել և դրա մյուս վնասարար գլուխներից էլ այնտեղ՝ լեռան վրա աներկյուղ ձերբազատվել են, որպեսզի երկրային բարձություններից դեպի երկնային բարձություններ՝ Տիրոջ մոտ կարողանան վեր ելնել, ինչպես որ Մովսեսն ու Եղիան նույն լեռան վրա Տիրոջը փառքով էին երևացել:

Իսկ ես՝ ամեն մարդուց ավելի տառաածս, որ Տիրոջ շավղով հետիոտն դեպի այն լեռն ընացա, սքանչելի եղբայրների բազմությունն աչքերովս տեսա,- ընթերցողներիդ ու ունկնդրողներիդ աղաչում են, ինձ վրա և առհասարակ ձեզ բոլորիդ վրա աղոթեցեք: Նրանց հետ Աստծու ատեղ դատաստանից փրկվենք և երկնքի արքայությանն արժանի լինենք մեր Տեր Հիսուս Քրիստոսով, որին հավիտյանս հավիտենից փառք: